

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ»-Ի ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մ. Պ. ՄԻՆԱՍՅԱՆ

Թե՛ հայ և թե՛ օտար բանասերներ, պատմաբաններ, փիլիսոփաներ և աստվածաբաններ Եղնիկ Կողբացու երկն իրավամբ համարել են V դարի հայ պրականության թանկագին գոհարներից մեկը: Տարբեր մասնագետների համար այն գրական, լեզվական, փիլիսոփայական, կրոնագիտական և այլ տվյալների պանծարան է: Շատերն են օգտվել դրանից, ուսումնասիրությունների նյութեր ու տեղեկություններ քաղել, ոմանք ճիշտ, ուրիշները՝ թյուր մեկնաբանելով այն: Եղել են հայագետներ, որոնք ուսումնասիրություններ են հրատարակել Եղնիկի փիլիսոփայական հայացքների, գրական աղբյուրների, նրա գրքի բովանդակության և բնագրի վերաբերյալ: Ամենավաստակավորներից է Ֆրանսիացի հանգուցյալ հայագետ Լուի Մարիեսը: Նա երկու աշխատություն է հրատարակել (1924 և 1928 թթ.) Եղնիկի երկի մասին, սլատրաստել է գիտական բնագիրը և ֆրանսերեն թարգմանությունը՝ նախ մենակ և ապա, կյանքի վերջին տասնամյակում, իր աշակերտ Շարլ Մերսիեի հետ: Բնագիրն ու թարգմանությունը առանձին գրքերով լույս տեսան Փարիզում 1959 թ.:

Մինչև այժմ հայտնի էին Եղնիկի այսպես կոչված II գրքի ռուսերեն թարգմանությունը (թարգմ. Գ. Եզյան, տե՛ս «Журнал мин. нар. просв.», 1858, հատ. 97, 98) և հատվածներ դարձյալ նույն գրքից (թարգմանիչներ՝ Ռուչուկ-Հովհաննիսյան, Արսեն Թումանյան, տե՛ս «Восточный сборник в честь А. Н. Веселовского», Մոսկվա, 1914, էջ 383, 401—105): Այժմ թարգմանված է ամբողջ երկը*: Թարգմանիչը՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վ. Զալոյանը, ստանձնել է շատ պատասխանատու պարտականություն:

Երբ ծանոթանում ենք հայ հին պատմագրական երկերի օտար կամ աշխարհաբար թարգմանություններին և դրանց մասին գրված քննադատականներին, նկատում ենք, որ կատարվել են թարգմանական զանազան սխալներ. դրանք բխել են թարգմանի լավ գրաբար չիմանալուց, թարգմանչական սխալ սկզբունքներից, մասամբ էլ բնագրերի գիտական կամ քննական վստահելի հրատարակությունների պակասից: Իսկ համեմատաբար լավ թարգմանիչները քննադատվել են նրա համար, որ չեն կարողացել պահպանել մատենագրի ոճը, արձակի կշռույթն ու շափը, չեն թարգմանել գեղեցիկ լեզվով, թարգմանվող լեզվի բառերի ու ոճերի ճիշտ և համապատասխան ընտրություն չեն կատարել:

Վ. Զալոյանի ռուսերեն թարգմանության մեջ ևս արտահայտված չէ մեր մեծ փիլիսոփայի՝ Եղնիկի սեղմ ոճը, գեղագիտորեն կառուցված նրա ամփոփ պարբերույթները կտրտված են, մասնատված ու պարզունականացված կամ,

* Езник Кохбаци, Книга опровержений (о добре и зле). Перевод, предисловие и примечания В. К. Чалояна, Ереван, 1968.

ընդհակառակն, երկարաբանված: Եկատելի է, որ թարգմանության մեջ ավելացված են անտեղի և շատ անգամ սխալ մեկնաբանող բառեր, մերթ փականացծերում, մերթ ազատ կամ, ընդհակառակն, անտեսված է բնագրի որոշ անհրաժեշտ բառերի թարգմանությունը: Սակայն այս թերություններն էլ երկրորդական են դառնում այն մեծ ու «փոքր» թարգմանական սխալների կողքին, որոնց հաճախ կարելի է հանդիպել: Հեղինակի միտքը շատ անգամ ճիշտ արտահայտված չէ նույնիսկ հեշտ ու դյուրըմբռնելի տեղերում: Թարգմանության մեջ Եղնիկին վերագրվում են հակասական մտքեր, և ոչ բոլոր ընթերցողները կկռահեն, թե դրանք չեն կարող հեղինակային լինել:

Վ. Չալոյանի թարգմանությունը կատարվել է ոչ թե Եղնիկի գիտական հրատարակությունից, այլ Վենետիկի 1826 թ. տպագրությունից: Ինչպես հայտնի է, Եղնիկի գիրքը մեղ է հասել մեկ ձեռագրով (որն այժմ պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում): Առաջին անգամ այն տպագրվել է 1762 թ. Զմյուռնիայում: Երկրորդ հրատարակությունը լույս է ընծայել մեծավաստուկ Արսեն Բագրատունին 1826 թ. Վենետիկում, որից կատարվել են հետագա վերահրատարակությունները, բացի գիտականից: Այս երկրորդ տպագրության մեջ երկր Բաժանված է վերնագրված չորս գրքի, սրանք էլ մասնատված են գլուխների: Բաժանումները բարեխղճությամբ պահպանված են նաև Եղնիկի լրիվ կամ մասնակի թարգմանություններում (բացի մի քանիսից), այդպիսի բաժանումներ չունի ձեռագիրը, և մեծ մասամբ դրանք չեն համապատասխանում երկր բովանդակությանը (և իրավամբ քննադատվել են), սակայն մեծապես օգտակար են տարբեր հրատարակությունների մեջ ցանկացած տեղը գտնելու համար: Ինչպես Գարեգին Խաչատուրյանն իր հրատարակության և հանդիպակաց էջում արևմտահայերեն թարգմանության մեջ (Բուենոս-Այրես, 1951), այնպես էլ Վ. Չալոյանը խախտել է երկրորդ հրատարակության բաժանումները, որով շատ ժամանակ է պահանջվում Եղնիկի մի հատվածը թարգմանության մեջ գտնելու համար: Հենց այս նկատույնով էլ գիտական բնագրի հրատարակիչներ Մարիեսն ու Մերսիեն Եղնիկի երկը 432 պարբերությունների բաժանելով հանդերձ փակագծերում նշել են Ա. Բագրատունու հրատարակության էջերը, գրքերն ու գլուխները (թեև Մարիեսը ժամանակին խիստ քննադատել է այդ բաժանումները որպես բովանդակությանը չհամապատասխանող): Բանասերները միայն կարող են նկատել, թե որքան դա օգտակար է և լավ մտածված:

1959 թ. գիտական հրատարակությունը վերարտադրում է միակ ձեռագիրը, որի ուղղագրական միջնադարյան շեղումները, տառերի ջնջումներն ու սրբագրությունները և այլն նշված են տողատակում: Բնագիրը պատրաստողների նկատի են առել թե՛ նախորդ բոլոր հրատարակությունները, որոնց մեջ տպագրական անխուսափելի սխալներից բացի կան կամայական կամ ճիշտ, բայց չմատնանշված սրբագրություններ, և թե՛ Եղնիկի երկր վերաբերյալ Մարիեսի, Սերսիեի և ուրիշ շատ բանասերների կատարած ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև աղբյուրագիտական, թարգմանական ու բաղմամբիվ այլ հարցեր, որոնք քննարկված են 1046 ծանոթագրություններում: Լստ այսմ էլ տպագրության մեջ հատուկ փակագծերով մատնանշված են հրատարակիչների անհրաժեշտ համարած ուղղումները, հավելումներն ու ջնջումները: Առաջաբանում ասված է, որ Լուի Մարիեսը ավելի քան երեսուն տարիներ աշխատել է այս հոյակապ գործի վրա:

Արդ, հակառակ այսպիսի հրատարակության առկայության, Վ. Չալոյանն իր թարգմանությունը կատարել է Վենետիկի 1826 թ. Բաղրատունու անհաջող հրատարակությունից (նշում ենք Բ-ով)։ Սա նրա հիմնական թերությունն է և առիթ է տալիս դիտողությունների։ Բերենք մի օրինակ, որտեղ թարգմանիչը կշահեր, եթե հետևելու լիներ գիտական հրատարակությանը (նշում ենք Մ-ով)։

Իսկ զգալիսն ոչ պարտիմք անծին անուանել, այլ արգասիս անձանց (Մ § 19, Բ 29. 5—7 Աէ) — «И нужно считать зло не субъектом, а результатом действия субъекта, <таких действий, которые приносят> зло» (46. 7—9). սրանկուն փակագծերում անտեղի ավելացված բացատրությունը հավանաբար հետևանք է Վենետիկի հրատարակության մեջ նախադասություն վերջում ավելացված «և չար» արտահայտության, որ չկա ձեռագրում և ավելորդ է. եթե այն բնագրային ընդունենք, անիմաստ բան կստացվի. «Եվ չարիքները պետք է համարենք ոչ թե անձինք, այլ անձանց արգասիք և չար»։ Եղնիկը կարող էր գրել, թե չարիքները պետք է չար համարենք։

Թարգմանության նախաբանում Վ. Չալոյանը տեղեկացնում է, թե ընդունել է Հր. Աճառյանի առաջարկած բնագրային այն սրբագրությունները, որոնք նրան անվիճելի են թվացել։ Թարգմանչին հայտնի է անշուշտ դրանց քննադատությունը Լ. Մարիեսի և Ն. Ադոնցի կողմից։ Բացի այդ, ուրիշ բանասերներ էլ առաջարկել են Եղնիկի գրքի բնագրային ուղղումներ, որոնք նույնպես պետք է նկատի առնվեն և «անվիճարկելիներն» ընդունվեն։ Ուղղումներ առաջարկել և պաշտպանել է նաև Լուի Մարիեսը թե՛ իր «De Deo», «Noms et verbes» աշխատությունների և թե՛ ֆրանսերեն թարգմանության ծանոթագրությունների մեջ։ Ինչպես ասվեց, այս հայագետը երկար տարիներ ուսումնասիրել է Եղնիկի գիրքը և ձեռք բերել լուրջ հաջողություններ. ուստի պետք է հաշվի առնվեն նաև, եթե ոչ անպայման ընդունվեն, նրա առաջարկած ուղղումները, որոնք կատարված են մեծ զգուշությամբ։ Բերենք մի օրինակ.

Մին ասէ, քե ի մերում գեալ ծովացուլս կով գործեաց. և զգոչիւնն հաւնապազ մեք լսեմք ամենեքեան (Մ § 123, Բ 99. 6—2 ն.) նախադասության ծովացուլս կով բառերը (ըստ գիտական հրատարակության) ձեռագրում «ծովացուլկով» ձևով են, որից և տպագիրներն ունեն «ծովացուլ զկով»։ Մարիեսը դեռևս 1924 թ. («De Deo», էջ 179—180) առաջարկել է կարդալ (և գիտական հրատարակություն մեջ ընդունել է և թարգմանել ըստ այնմ) «ծովացուլս կով» («գործեաց»), այսինքն՝ «կովը ծովացուլեր ծնեց»։ Եվ հետևաբար «զգոչիւնն» հայցականը, որ բոլորի կողմից թարգմանվում էր «ներա գոչունը» (ո՞ւմ՝ ծովացուլի՞, թե՛ կովի. Գ. Խաչատուրյանի թարգմանության մեջ անորոշ է՝ «անոր», Վ. Չալոյանի թարգմանության մեջ՝ կովի, «ee»), Մարիեսը թարգմանել է «ներանց (այսինքն՝ ծովացուլերի) զոչունը»։ Ինչպես պատճառաբանել է. նա հենվում է այն փաստի վրա, որ այդ նախադասությունից առաջ Եղնիկը գրել էր. «... և ոչ ի կովուց ծովացուլն ելեալ» (Մ էջ 47. 3, Բ 99. 7, Աիդ). եթե «ոչ»-ը հանենք, կմնա այն, ինչ ասում էին նրա հակառակորդները։ Ավելացնենք, որ նշված տեղից մի քանի տող էլ առաջ Եղնիկը նույնպես գրել է. «... իբրեւ ծովացուլն, զոր ի կովէ ելեալ ասեն» (Մ էջ 46. 3 ն., Բ 98. 5 ն., Աիդ)։ Մարիեսի և մեր մեջբերումներից պարզվում է, որ հեթանոսները պնդելիս են եղել, թե կովը ծովացուլեր է ծնում, այսինքն՝ «ծովացուլս կով գործէ», և ոչ թե հակառակը, իբր «ծովացուլ զկով գործեաց—ծովացուլը կով ծնեց», ինչպես կարդում ենք ձեռագրում։ Մարիեսն այս ընթերցվածքը համարում է լսողական

շփոթության արդյունք: նա գրել է. «Բնեներորդ դարից հետո ց արտասանվող կ-ի առջև ս-ն հեշտությամբ ձայնեղացել է և դարձել գ. որով՝ ծովացույզ կով» («De Deo», էջ 179—180): Այսպիսով՝ Մարիեսի առաջադրած ուղղումը հենվում է հենց եզնիկի բնագրի վրա և պատճառաբանվում է հնչյունաբանությամբ: Եթե անգամ թարգմանիչն այն շրջաններ, գոնե «...говорят цовацуй: (ռուսական տառադարձությամբ և ծանոթության մեջ չբացատրված այս հայերեն բառը որքանով է հասկանալի ռուսախոս ընթերցողին), <якобы> происходит от коровы» (77. 12), կամ «цовацуй не происходит от коровы» (77.19) ճիշտ թարգմանելուց հետո պետք է կասկածեր մի քանի տող հետո զրաժի վրա, թե «цовацуй сотворил корову» (77. 12 ն.): «Ծովացույզ կով» ընթերցվածը Տաշյանը համարում է գրչական սխալ («Հանդես ամսօրյա», 1969, էջ 462, ծան. 248):

Ինչպես նշեցինք վերևում, ժամանակին եզնիկի գիրքը լրիվ կամ հատվածաբար թարգմանվել է ֆրանսերեն (Լը Վայան դը Ֆլորիվալ, 1853, սխալաշատ: Վենետիկի Մխիթարյան մի միաբան, հատվածներ, 1867: Մարիես և Մերսիե, 1959), գերմաներեն (Միք. Շմիդ, 1900, աշխատակցությամբ Գ. Գալեմբյարյանի, հաջող թարգմանություն: Սիմոն Վեբեր, 1927), արևմտահայերեն (Գարեգին Խաչատուրյան, 1951), ռուսերեն (հատվածներ): Այսպիսով, ռուսերենի թարգմանչի ճանապարհը բավականին հարթված էր: Առաջաբանում նա ոչինչ չի ասում, թե ո՞ր թարգմանությունից և որքանով է օգտվել: Բայց նրա թարգմանությունը բնագրի և արևմտահայերենի հետ համեմատելով՝ համոզվեցինք, որ նա մոտիկից հետևել է վերջինիս, կրկնելով նրա սխալները, հաճախ էլ ճիշտ չհասկանալով աչն:

Այժմ անցնենք ռուսերեն թարգմանության սխալների քննարկմանը, ավելի ճիշտ՝ մի մասի. հնարավոր չէ այստեղ քննության բովից անցկացնել ամբողջ թարգմանությունը: Քանի որ թարգմանությունը կատարված է 1826 թ. հրատարակությունից, ուստի իբրև սխալ թարգմանության օրինակներ կբերենք այնպիսի հատվածներ, որոնք տառացի, կամ աննշան տարբերությամբ, ամրնկնում են Մարիեսի գիտական տպագրության հետ:

1. Հետևյալ նախադասության թարգմանությունը ոչ միայն սխալ է, այլև ռուսերենում իսկ անիմաստ.

և առնճ քաղաուրի րստ սրտի իւրում գտելոյ, քախծելոյ ի հաւուածոցն, հրեշտակ ի կերպարանս մարդոյ սուսեր ի ձեռն ցուցանէր (Մ էջ 45. 16—17, Բ 95, Աիգ) — «Он явился перед близким своему сердцу, <храбрым> мужем королём ангела в образе человека с мячом, когда тот был ражён под ударами» (75. 22): Նախադասության իմաստն է. «[Աստված] իր սրտի համեմատ գտած և հարվածներից թախծող թագավոր մարդուն ցույց էր տալիս հրեշտակ՝ մարդու կերպարանքով, սուսեր ձեռքին»:

2. և եզ! էլ էլի հիւտեսիլ և բոցալեզու ի կառս, ազգի ազգի կերպարանալ: Եւ պաւալար մարդկակերպարան երեսեցուցանէր (Մ էջ 45. 18—19, Բ 95, Աիգ) թարգմանված է. «Он показал Иезекиилю в пламенном, огнеязычном виде, в колеснице, запряженной различными изображениями <существ>, с возницею в облике человечьем» (75. 25): Նախադասության իմաստն այն է, որ աստված եղեկիելին ցույց էր տալիս դարձյալ իր հրեշտակին՝ մարդու կերպարանքով, իբրև կառապան: Թարգմանության սխալը հավանաբար գալիս է Գ. Խաչատուրյանի թարգմանությունը ճիշտ չհասկանա-

լուց «Եվ Եզեկիելի կերեցնէր... մարդանման կառավար մը» (46), որտեղ «Եզեկիելի» հոլովածը տրական է:

3. Եւ եկեալ Որդոյ առ Աբրահամ երկուք հրեշտակաւ, արժանի առնէր նաշ ի վրանի նորա ուտելոյ (Մ 45. 2, Բ 94, Աիգ) թարգմանված է «Явился <же> сын <божий> к Аврааму с двумя ангелами, сделал его достойным отобедать у себя в шатре» (75. 8). Աբրահամի վրանը թարգմանության մեջ դարձել է Քրիստոսի վրան:

4 ... մթաբն, որ զբռնին շողայցեն... (Մ 9. 6, Բ 5. 2, Աա)—туман, закрывающий зрение» (33. 9). Բնագրի իմաստն է. «...աղտերը, որոնք շողում են բերրի շուրջը...»: Ավելորդ ենք համարում մանրամասն ցույց տալ, որ բնագրի իմաստը հարեանցիորեն է թարգմանված:

5. Եւ այսպէս չորեքին բնութիւնն, ուստի աշխարհս կազմեալ և կայ. առանձինն՝ ապականիչ է միմեանց (Մ. 10. 2 ն., Բ 10. 5 ն., Աբ)— «Такова природа четырех <элементов>, из которых образовался и существует мир. <Элементы>, каждый в отдельности в отношении друг друга—пагубны» (35. 20): Թարգմանիչը հեղինակի գեղեցիկ ոճով և կուռ տրամաբանությամբ կառուցած նախադասությունը ոչ միայն անտեղի կտրատել և պարզունակացրել է, այլև սխալ է թարգմանել: Բնագրի իմաստն է. «Եվ այսպես, այն չորս բնությունները (տարրերը), որոնցից աշխարհս կազմված է և գոյություն ունի, առանձին՝ միմյանց ապականիչ են»: Հմմտ. Քուչուկ-Հուկ-Հաննիսյանի հաջող թարգմանությունը՝ «Таким образом, четыре естества, из коих мир составлен и пребывает, отдельно взятые, взаимно разрушительны» («Восточный сборник в честь А. Н. Веселовского», Москва, 1914, 383): Վ. Չալոյանն իզուր է փակագծերի մեջ առել «элементы—բնութիւնք» բառը. հենց դրանով պետք է թարգմանեն Եզնիկի «բնութիւնք» փիլիսոփայական տերմինը նաև այլ տեղերում, և ոչ թե «природа» բառով, ինչպես հետևյալ նախադասության մեջ. «...այսպէս ուրեմն կերպարանաց և զարդուց և արդուց արարիչ է Աստուած, և ոչ բնութեանց» (Մ § 14, Բ 25. 2 ն., Ադ)— «...то бог выступает творцом не природы, а качества, формы, украшения» (44. 17 ն.). Խոսքը հայտնի չորս տարրերի՝ ջերմության, ցրտի, ցամաքի և խոնավության մասին է, որոնցից է, ըստ հենքի, կազմված աշխարհը:

6. Զիա՞րդ պաշտիցեմք զարեգակն, զի մերք կոչի իբրև զճառայ (Մ 12. 16, Բ 14. 2 ն., Ագ)— «Почему мы должны поклоняться солнцу? Потому ли что оно иногда вызывается как слуга...» (37. 10). Բնագրի 1826 թ. հրատարակությունը ձեռագրի զի-ի փոխարեն ունի ուր. սրանով ավելի պետք է հեշտանար թարգմանի գործը: Նախադասության իմաստն է. «Ինչո՞ւ պաշտենք արեգակը, որ մերթ կանչվում է իբրև ծառա»: Վ. Չալոյանը ուր հարաբերականը թարգմանել է մի անտեղի հարցադրմամբ, որ խեղաթյուրում է բնագրի իմաստը, ինչպես կարող է նկատել ընթերցողը: Այս նույն սխալը կրկնված է «...կամ զլուսին, որ ամսոյ ամսոյ հիւժումի» (ն. տ.) նախադասության թարգմանության մեջ՝ «Или <зачем мы должны поклоняться> луне? Потому ли, что она...» (37). Գ. Խաչատուրյանը ձիշտ է թարգմանել (7. 1):

7. Իբրև խաւուն բերանով անշունչն բողոքէ (Մ 12. 22, Բ 15. 13, Ագ)— «Это неодоушевленное <солнце>, словно говорящее существо, языком своим протестует» (37.18): Բնագրի իմաստն է. «անշունչը (համրը) իբրև խոսուն բերանով բողոքում է»: Այսպես են հասկացել բոլոր թարգմանիչները:

տես, օրինակ՝ Գ. Խաչատուրյան, «անշշունչը՝ իրրև խոստուն բերանով կբողոքե» (7. 9): Իսկ Վ. Չալոյանը անշշունչն բառը «անձայն, անխոս, մունջ» (Առձեռն բառարան), որ գոյականաբար գործածված ածական է, մեկնաբանել է որպես «այս անշունչ արևը»: Արևմտահայերեն թարգմանության «անշշունչն» ուղղագրությամբ բառը նա հավանաբար կարդացել է «անշունչը» և թարգմանել ըստ այնմ: Եվ ամբողջ նախադասությունը նա ընկալել է հետևյալ իմաստով և կետադրությամբ. «Իբրև խաւսուն, բերանով, անշունչն (փոխ. անշշունչն) բողոքէ»: Եղնիկն այսպիսի բան չէր կարող գրել:

8. Կամ զաւղ, որ մերք գաշիլէ վարագացեալ՝ հրամանաւ, և մերք սառւէ ի գոշելոյն՝ սաստիւ (Մ 12. 26, Բ 15. 7 ն., Ագ)— «или воздуху, который то ревет, как дикий кабан, то молчит утихомирясь» (37. 25). չեն թարգմանված բնագրի հրամանաւ «հրամանով» և սաստիւ «սաստով» բառերը, որոնք այստեղ կարևոր են, քանի որ, ըստ Եղնիկի, օգին հրամայողն ու սաստողը աստված է:

9. Եւ այսու ամենայնիւ յայտ է, րե զոր առ աստուածսն ունին, անաղբն շատի և անպատուեն (Մ 13. 3, Բ 16. 10, Ագ)— «Из всего этого явствует, что те, которые эти творения называют богамн, сильно оскорбляют их и бесчестят» (37. 7 ն.). բնագրի իմաստն է. «Եվ այս բոլորով հայտնի է, թե այն (արարածները = շնչավոր և անշունչ), որ նրանք (արարածապաշտները) աստվածներ են համարում, (մարդկանցից) շատերն անարգում և անպատվում են»: Իսկ ողուերեն թարգմանությունից դուրս է գալիս, թե հենց արարածապաշտներն են անարգում և անպատվում իրենց կողմից աստված համարվող արարածներին: Բացի դրանից, շատի հոգնակի ուղղականը, «շատերը», թարգմանվել է մակբայաբար՝ «сильно»: Գ. Խաչատուրյանը ճիշտ է թարգմանել. «... այն բաները՝ զորս աստվածներ կհամարեն, շատեր կանարգեն ու կանպատվեն» (7):

10. Եւ այնչափ ինչ աբար ի նմանէ՝ որչափ Աստուծոյ վայելէր առնել աբարսն (Մ 15. 2, Բ 21. 9, Ադ)— «Бог брал <из материи> то, что ему было нужно, и столько, сколько было необходимо, чтобы творить сущих» (42. 21). այստեղ աբար (անորոշ դերբայը՝ առնել) նշանակում է «ստեղծեց» և ոչ թե «վերցրեց—ծրալ», որ կլինի առ: Այս սխալից բացի, թերևս դրա հետևանքով, բնագրի միտքը խմբագրված և խեղաթյուրված է: Այստեղ ևս վերկնվել է Գ. Խաչատուրյանի սխալ թարգմանությունը. Եվ անկից առավ այնչափ բան, որչափ կվայելեր աստուծո՝ ստեղծելու համար՝ արարածները» (10. 16): Գոնե սա չունի ողուերենի անտեղի հավելումները՝ «бог, из материи»:

¹ Մարիեսի և Մերսիեի ֆրանսերեն թարգմանության մեջ «ստեղծելու համար» հատվածի թարգմանությունը, մեր կարծիքով, նույնպես անհաջող է. «Et autant d'êtres en créa-t-elle, qu'il convenait à Dieu (d'en tirer) pour créer des créatures (dignes de lui)» «Եվ այնքան էակներ ստեղծեց զրանից, որքան պատշաճում էր աստծուն (զրանից դուրս բերել), ստեղծելու համար արարածներ (իրեն արժանի)» (12. 18, 18, ընդգծումները մերն են—Մ. Մ.): 64-րդ ծանոթագրության մեջ ասված է, թե այս նախադասությունը բավականին մթին է, ինչ բան այստեղ նշանակում է «արարած». թե նախադասություն վերջում գտնվող առնել անորոշը նպատակի պարագա է (այսպես է հասկացել նաև Շմիդն իր դերմաներեն թարգմանության մեջ, էջ 31, 303): Եթե այս ճիշտ համարենք, ստացվում է «ստեղծեց... ստեղծելու համար», որ մենք ընդգծեցինք վերևում: Մեզ թվում է, որ քերականորեն այդ անորոշ դերբայը, իր աբարսն ուղիղ խնդրով,

11. Կէսմն անսկզբնակից ինչ բնոյ Աստուծոյ կամեցան ղենել. և կէսմ բստ նմանէ նիւր ինչ, զոր հիւղն անուանեն, քե ի նմանէ աւար զաւարածս (*Մ* § 5. 3, *Բ* 22. 3, *Ա* 6) — «Одни пытались поставить наряду с богом нечто, не имеющее начала, другие — нечто, подобное материи, что называли *հիւղ*, из которого сотворено все существующее» (42. 11): Բնագրի իմաստն է. «Ոմանք ուղեցին աստուծո հետ անսկզբնակից մի արարած ենթադրել. ուրիշներ՝ նրանից հետո ինչ-որ նյութ, որ նրանք հյուղ են անվանում. իբր թե զրանից է ստեղծել արարածներին»: Ռուսերեն թարգմանությունն ունի մի քանի սխալներ.

ա) Թարգմանված չեն բնագրի բստ նմանէ բառերը. որ Գ. Խաչատուրյանը հասկացել է որպէս «անկե դուրս» (10. 9 ն.). սա ճիշտ չէ, որովհետեւ բստ նախդիրը բացառականի հետ («նմանէ») այդպիսի իմաստ չի արտահայտում. սովորաբար արտահայտում է հաջորդականություն, բայց նաև՝ «հետո». ուստի այստեղ բստ նմանէ նշանակում է «նրանից հետո»: Ռուսերեն թարգմանության մեջ բստ նմանէ նիւր ինչ արտահայտությունը թերեւ թարգմանվել է «нечто подобное материи», նմանէ բացառականը հավանաբար հասկացվել է «нման է — подобное»: Ըստ նմանէ-ն «նրանից հետո» եզնիկի այս տեղում հակադրվում է բնոյ Աստուծոյ «աստուծո հետ» արտահայտությանը:

բ) Անուանեն ներկան թարգմանվել է անցյալով՝ «назвали»:

գ) Աւար ստորոգյալի ենթական բնագրում «Աստուած» գոյականն է, իսկ ռուսերեն թարգմանության մեջ անորոշ է մնացել՝ «сотворено — ստեղծված է»: Ինչն մտավախությունը նկատելի է թարգմանության մեջ նաև այլուր. ահա մի օրինակ. և աւր զոր հիւղ առ ձեռն ղենիցեն Աստուծոյ. ո՞չ ապա՛հն զայն՝ ուստի զաշխարհս աւար (*Մ* § 13, *Բ* 25. 8 ն., *Ա* 4) — «Какую материю ставят наряду с богом? Ведь та материя, из которой создан мир...» (42.21). աւար ստորոգյալի ենթական դարձյալ Աստուած գոյականն է: Նախադասության երկրորդ մասն այն երանգը չունի, ինչ ստացվում է թարգմանությունից: Այս, ինչպէս և վերևում բերված մի քանի օրինակներից երևում է, որ թարգմանիչը եզնիկի բնագրից վտարում է աստծուն՝ եզնիկին մատերիալիստ դուրս բերելու համար:

Վերջապես, ռուսախոս ընթերցողը ի՞նչ կարող է հասկանալ հայերեն տառերով թողնված՝ այստեղ հիւղ, էջ 35-ում նիւլէ (թեև բնագրում հիւղ է) հայերեն բառից. հայերեն տառերով հայերեն բառերի հանդիպում ենք նաև թարգմանության մեջ այլուր, օրինակ՝ էջ 74, այս, ինչպէս նաև առաջաբանում:

12. Մանաւանդ զի յուսացեալ ևս վստահ իցեմք յուղղոց ունկնդրաց ի կամացն մտադիւրսրիւն. ուստի և լինիցի նոցա զնշմարիտն ուսանել, և մեզ ոչ ի զոր ինչ զրանս ծախել (*Մ* 15. 14, *Բ* 22. 11 ն., *Ա* 6) — «Особенно надемся на внимание справедливых слушателей, которые в состоянии воспринять правду, и мы не зря потратим слово» (42. 3 ն.): Բնագրի իմաստն է. «Մանավանդ որ հուսով, ավելին՝ վստահ ենք ուղղամիտ ունկնդիրների հոժարակամությամբ, ուստի թե՛ նրանք ճշմարիտն ուսած կլինեն, և թե՛ մենք ամենևին

վախկէր ստորոգյալի ենթական է. ուստի ամբողջ նախադասությունը կթարգմանեինք. «եվ այնչափ բան (արարած) ստեղծեց զրանից (նյութից), որքան աստծուն պատշաճ էր արարածներ ստեղծել»: Եվ ֆրանսերեն թարգմանությունը կստացարկեինք ուղղել այսպես. «Et autant d'êtres en créa-t-il d'elle, qu'il convenait a Dieu de créer des créatures».

իզուր վատնած չենք լինի մեր խոսքերը»։ Թողնելով ուրիշ թերություններ, նշենք, որ ոուսերեն թարգմանության մեջ և լինիցի նոցա զննարիտն ուսանել նախադասությունը թարգմանվել է, չգիտես ինչի՞ հիման վրա, «которые в состоянии воспринять правду» — որոնք ի վիճակի են ընկալելու ճշմարտությունը»։ Ի միջի այլոց, հենվելով ունկնդրաց բառի վրա, թարգմանության 3-րդ ծանոթագրության մեջ Վ. Չալոյանը ենթադրում է, թե Եղնիկի գիրքը ծնունդ է առել դպրոցական միջավայրում հեղինակի կարգացած դասախոսություններից։ Սա Սիմոն Վեբերի կարծիքն է, որ ընդունել է ոուսերենի թարգմանիչը։ Դժվար թե այդպես լինի։ Համենայն դեպս, եթե Եղնիկը ունկնդիրների ներկայությամբ խոսած լիներ իր «ճառերը» (Եղնիկի առաջին հրատարակությունը բաժանված էր ճառերի), ապա խոսքը նրանց ուղղելիս՝ վերոհիշյալ տողում նա պիտի առեր «ունկնդրացո», գրաբարի դ հոդով, որ արտահայտում է տարածական հարաբերություն խոսողի և խոսակցի միջև²։

13. ...Թե իբրև ի տեղուք, որպէս և ջուր՝ յերկրի (Մ § 12. 3, Բ 25. 2, ԱԵ) — «как, <например>, воды, находящейся на <поверхности> земли» (44. 7). Այետք է թարգմանվեր ոչ թե «երկրի մակերեսին», այլ «երկրի մեջ», որովհետև նախորդող տողերում Եղնիկը խոսում է հյուզի՝ աստուծո մեջ լինելու մասին, որ նմանեցնում է կենդանիների՝ օդի մեջ լինելուն։ Մյուս թարգմանիչները հասկացել են «երկրի մեջ» (Դ. Խաչ., էջ 11)։

14. Եւ զհիւլեայն ասեմ, թե անճան... Էր (Մ § 12. 4, Բ 25. 4, ԱԵ) — «О материи говорят, что она бессмысленна» (44. 9)։ Ռուսերեն ընդգծված բառը նշանակում է «անիմաստ, անմիտ, անխորհուրդ», իսկ անճան՝ «անպատշաճ, անվայել, անշնորհք» (ըստ Առձեռնի). իսկ ասեմ՝ «կարդ կանոն». հետևաբար այստեղ անճան նշ. «անկարգ, անկանոն, խառնիխուռն»։ Ըստ Եղնիկի հակառակորդների, այդպիսին էր հյուզը, որ աստված կարգ ու կանոնի է բերել։ Ուստի ոուսերեն թարգմանությունը սխալ է։

15. Նուչն տեղում, անմիջապես շարունակության մեջ, կարդում ենք. եթե ըստ նոցա մտացն իցէ, ապա շաբեաց տեղի էր Աստուած, զի անհեղեղքն և անգարդքն ի նմա էին. որ անհնարին անաւրեւնութիւն է. կարծել զԱստուծոյ՝ թե երբեմն ասպնջական շաբեաց էր, և ապա աւարիչ շաբեաց։

Նա և բաժանելի ևս՝ թե ի նմա իբրև ի տեղուք էր (Մ § 12. 5, Բ 25. 6, ԱԵ) — «Если <это так>, то причиной зла являлся бы бог, ибо <получается, что> бессмысленное и бескачественное <определение> относилось бы также к богу. Невероятное безбожие думать, что бог способен на зло, а затем <даже—>, что он является и творцом зла, <утверждать> также, что <можно представить> бога отдельно от материи, так как материя якобы находится в нем как в вместилище (44. 10)։ Եղնիկի միտքը հետևյալն է. «Եթե նրանց մտածածի պես լինի, ապա աստված շարիքների տեղ էր. քանի որ անճոռնիներն ու անդորդները նրանում էին. ինչ որ արտա-

² Այստեղ Եղնիկը «հավատացյալ» իմաստով է գործածել ունկնդիր բառը։ Մանիի կրոնի սովորական հավատացյալները ի տարբերություն բնութայնների կամ կատարյալների, եկեղեցական ֆայրերի կողմից կոչվել են ունկնդիրներ կամ կատխումեններ (տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 101)։ Կարծում ենք, որ ունկնդիր են կոչվել նաև քրիստոնեական եկեղեցու շարքային հավատացյալները, որոնք ունկնդրում էին իրենց վարդապետներին։

կարգ չարութիւնն է աստուծո մասին կարծել, թե նա երբեք չարիքների աստիճանական էր և ապա (հետևաբար) չարիքների արարիչ:

Նաև՝ (աստված) բաժանելի էլ (էր), եթե (հյուղը) նրանում իբրև մի տեղում էր»:

Ռուսերեն թարգմանության մեջ բնագրի իմաստից քիչ բան է մնացել: Ռրոնք են սխալները:

ա) Եթե ըստ նոցա մտացն իցէ նշանակում է «եթե այնպես լինի, ինչպես նրանք են մտածում, կարծում, եթե նրանց կարծածի, մտածածի պես լինի» և ոչ թե պարզապես «если <это так>», որոնք իբրև թարգմանի ավելացրած բառեր առնված են փակագծերի մեջ: Ճիշտ է, որ Գ. Խաչատուրյանն էլ է թարգմանել «եթե այդպես է» (էջ 12), բայց նա անմիջապես հետո ավելացրել է «ինչպես իրենք կմտածեն», որ Վ. Չալոյանն անտեսել է:

բ) Բնագրի տեղի «տեղ» բառը («չարեաց տեղի էր Աստուած») թարգմանվել է «причиной—պատճառ», ինչպես, ի միջի այլոց, Գ. Խաչատուրյանի թարգմանության մեջ է (էջ 12), որ սխալ է: Հայտնի է, որ տեղն ու պատճառը նույն բանը չեն:

գ) Անհեղեղին և անգարդին, «անճոռնի և անզարդ բաները», չգիտես փիլիսոփայական ի՞նչ առումով թարգմանվել են «бессмысленное и бескачественное <определение>», իսկ ի նմա էին «նրանում էին» ուսմանն դարձել ևն «относилось бы также к богу»:

դ) Թարգմանիչը ճիշտ չի հասկացել նա և բաժանելի ևս՝ թե ի նմա իբրև ի տեղում էր նախադասության իմաստը: Հատկապես սխալ է նրա առաջին մասի թարգմանությունը. «... <утверждать> также, что <можно представить> бога отдельно от материи». սա հիմնովին սխալ է: Ռուսերեն թարգմանությամբ ստացվել է, որ «անասելի անաստվածություն է պնդել նաև, թե աստծուն կարելի է պատկերացնել նյութից անկախ»: Ընդհակառակն, ըստ բրիտանական վարդապետության, աստված հենց նյութից անկախ գոյություն ունի: Նա և բաժանելի ևս՝ թե ի նմա իբրև ի տեղում էր նախադասությունը բնագրում կապվում է ոչ թե «անհնարին անարկենություն է կարծել զԱստուծոյ, թե» մտքի, այլ մի քանի տող վերևում արտահայտված «Եթե ըստ նոցա մտացն իցէ» նախապայմանի հետ: Չենք խոսում այս պարբերության թարգմանության մեջ եղած մյուս սխալների մասին:

16. Զի՞նչ չառ քան զաւծ կայցէ, և ի նմանէ քերիակէ. և ի սպանող դեղոց, որ ի նենգութենէ մարդկան կազմեցան, չև հասուցեալ և անդէն բուծէ (Մ § 64, Բ 63. 15, ԱԺԵ)—«Что же может быть более злым, чем змея? А <между тем> из нее достают «тернакэ», которое лечит от неуспешных еще привести к гибели смертоносных лекарств, составленных коварством людей» (61. 21). սխալ է թարգմանված նախադասության վերջավորությունը. չև հասուցեալ բառերը բնագրում վերաբերում են թերիակեին, իսկ ուսմանն թարգմանության մեջ կապվել են սպանող դեղերի կամ թույների հետ, և այնպես է ստացվել, որ թերիակեն բուծում է այն ժամանակ, երբ թույները դեռևս չեն հասցրել սպանել մարդուն: Եզնիկն այսպիսի միտք չի արտահայտել: Ինչ որ այստեղ ուսմանն կարդում ենք, ամեն մի դեղի, որքան էլ այն ավդու և զորավոր լինի, առողջարար ազդեցության նախապայմանն է. մահացածին ոչ մի դեղ չի օգնի, և ոչ էլ թերիակեն հարություն տվող է: Չև հասուցեալ նշանակում է «դեռ չհասցրած, դեռ ցավին չհասած, դեռ հիվանդը

չընդունած»։ սա մի պատկերավոր արտահայտություն է, որով Եղնիկը ցույց է տալիս թերիակերի, որպես հակաթույնի փրկարար ազդեցության արագությունը։ չե նասուցեալ և անդէն բումէ—«դեռ չհասցրած՝ տեղն ու տեղը, իսկույն բութում է»։

17. Եւ կերակուրս մատուցանել, որպէս բարեկացիքն վիշապին, զոր սպան Աստուծոյ սիրելին (Մ 65, Բ 64. 12, ԱԺԵ)—«зовут ее к себе домой, подают ей пищу, как вавилоняне—дракону... и убили его, возлюбленного <своего> бога» (61. 6 ն., ընդգծումը մերն է—Մ. Մ.)։ Այս հասարակ նախադասությունը նշանակում է «նրան սպանեց աստուծո սիրելին»։ Դրանով Եղնիկն ականարկում է Աստվածաշնչից Դանիելի գրքի ԺԴ 22—26 հատվածը. «Եւ էր վիշապ մի մեծ, և պաշտէին զնա բաբելոնացիքն... Եւ առ Դանիէլ եղ, ձիւթ և ճարպ և մաղ և եփեաց ի միասին և արար զնդակս և եհար ի բերան վիշապին. և իբրև կերաւ, պայթեաց վիշապն»։ Ուստի Դանիէլն է սպանել վիշապին և նա է «աստուծո սիրելին»։

18. Կամ թե յորդոյն իւրմէ յԱրհմենայ կասկած ինչ էր նմա. և վասն այնորիկ զբարսմունսն յՌմբղ տայր, զի նոքաւ յաշտ աբաբեալ վերագունին՝ անկասկած լինիցի. ապա՛հն պարտ էր ումեք ի միջի լինել, որում զյաշտն առնէր (Մ 59. 6, Բ 130. 8, ԲԵ)—«Быть может, Зрван подозревал своего сына Ар'мна и поэтому отдал жезл Ормизду, чтобы тот, принося жертву верховному <владыке>, обеспечил <их> безопасность? А по сему должен был быть кто-то, кому <Зрван> мог делать жертвоприношения» (92. 16 ն.)։ Թարգմանության մեջ կան մի քանի սխալներ։

ա) Եղնիկի նախադասությունն սկսվում է պայմանով և ունի հետևանք. կամ թե այստեղ նշանակում է «կամ եթե» և ոչ թե «быть может». հենց այս սխալի հետևանքով էլ խախտվել է Եղնիկի նախադասության կառուցվածքը, տրամաբանության ուժը։

բ) Դոյականաբար գործածված վերագոյն ածականը չի նշանակում «верховный владыка» գերագույն տեր, գերագույն վեհապետ»։ Կարելի էր համապատասխան մի բառ գտնել։

գ) Ախ... անկասկած լինիցի նշանակում է «որպեսզի կասկածից զերծ լինի, կասկածից ազատվի» Զրվանք, քանի որ նա կասկած ուներ իր շար որդի Արհմենից։ Ռուսերեն թարգմանության այս իբր «համապատասխան» հատվածը հիմնովին սխալ է. «обеспечил <их> безопасность»։ Թարգմանիչը հավանաբար սխալ է հասկացել արևմտահայերեն թարգմանությունը. «ինքն ըլլա ասպահով» (64), որ ճիշտ է։ Թարգմանիչը, սխալ հասկանալով նախադասության սկզբի կամ քե-ն, Եղնիկի մաքին տվել է հարցական բնույթ։

դ) Սխալ է մեկնաբանված նախադասության որում զյաշտն առնէր վերջավորությունը, որ նշանակում է «որին նա զոհ էր մատուցում» և ոչ թե «կարողանար զոհաբերություն անել»։ Սակայն այստեղ հիմնական սխալն այն է, որ նախադասության որպես ենթակա բնորոշված է «Զրվան» անունը։ Այդ նախադասության ենթական Զրվանը չէ. նա մինչ այդ արդեն զաղարկել էր զոհ անելուց, քանի որ զոհաբերության շնորհիվ հասել էր իր նպատակին, ունեցել էր մի բարի որդի Որմիղդ անունով (նրա Արհմըն որդին կասկածանքի պատու էր), զոհաբերությունը խորհրդանշող ճիպտները հանձնել էր Որմիղդին. այսուհետև վերջինս պիտի զոհ մատուցեր, որպեսզի հայր Զրվանն «անկասկած

լինիցի»։ Ուստի «որում վյաշտն առնէր» նախադասության ենթական Զրվանը չէ, այլ Որմիղդը։

* * *

Վ. Չալոյանը երեսուն էջ առաջաբան է կցել ուսերեն իր թարգմանությանը³։ Մենք այստեղ մտադիր չենք քննել այդ առաջաբանը ամբողջությամբ, այլ կուզենայինք կանգ առնել միայն մի քանի հարցերի վրա։

Վ. Չալոյանը երբեմն միայն հնարավորություն է տալիս մեզ ստուգելու Եզնիկի հայացքների մասին իր կայացրած վճիռները, քանի որ ոչ բոլոր դեպքերում է նա կատարում հեղինակային մեջբերումներ, իսկ մեջ բերվածներն էլ մեծ մասամբ կա՛մ տեղին չեն, կա՛մ, առավել ևս, բնագրի ոչ ճիշտ թարգմանություններ են, որ ամեն անգամ պետք է բնագրով ստուգել։ Վերևում մեր քննարկած նախադասություններից մի քանիսը վկայված են առաջաբանում։ Ահա մեկ ուրիշ մեջբերում, որի էությունը շատ հեռու է թարգմանությամբ մեջ բերվածից։

Եւ արդ քանզի մի էութիւն անհնգին է և անհաս բնութեամբ, առ նորա անհնգնութիւնն քննաւորիւն անգիտութեան մատուցանելի է և առ էութիւնն նորին դաւանութիւնն գիտութեան և ոչ քննութեան (Մ 9. 8, Բ 6. 6, Աա) նախադասությունը վկայակոչված է հետևյալ թարգմանությամբ. «И так как <единая> сущность неисследуема и по природе своей непостижима, то неисследуемость ее должна представляться доказательством об отсутствии знаний о ней; исповедание той же сущности <определяется> не исследованием, а знанием ее» (10. 14, 30)։ Մեր կարծիքով, բնագրի իմաստը բառացի հետևյալն է. «...նրա անքննելիությանը պետք է անգիտության (տգիտության) քննություն մատուցել, և նրա էությանը՝ ստույգ ճանաչման և ոչ թե քննության դավանություն (պետք է մատուցել)»։ այսինքն՝ մեկ էություն կամ աստուծո անքննելիության նկատմամբ մարդս պետք է խոստովանի իր տգիտությունը և նրա էությունը պետք է դավանի առանց քննելու, առանց հասկանալ ձգտելու. կույր հավատք, ինչպիսին պահանջում է եկեղեցին իր հավատացյալներից։

Վ. Չալոյանը անպայման ձգտում է Եզնիկին ոչ միայն խել եկեղեցուց (նա ժխտում է Եզնիկի եկեղեցական լինելը), այլև նրան դարձնել քրիստոնեության դավանաբանության հակառակորդ, հերետիկոս։ Նա այս կանխակալ մոտեցմամբ է բնութագրում և մեկնաբանում Եզնիկին։

Տեսնենք՝ դարի քրիստոնեական եկեղեցու դեմ Եզնիկի մարտնչելու միջոցների «գիտատեր»։

Հոգու հասկացության հարցում Վ. Չալոյանը Եզնիկին դուրս է բերում «քրիստոնեության տիրող դավանաբանության» սուր հակառակորդ։ Նա տրամաբանում է այսպես. հոգու հարցում Եզնիկը քննադատում է Պատենին, իսկ իրը «Ինչպես հայտնի է,— գրում է Վ. Չալոյանը,— քրիստոնեությունը Պատենինից փոխ է առել մարդկային հոգու հասկացությունն այնպես, ինչպես այն

³ Խմբագրական մանր փոփոխությունները չվերլուծված, առաջաբանում բառացի կրկնված է այն, ինչ առաջաբանի հեղինակը գրել է նախ՝ «Հինգերորդ դարի հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացու ուսմունքի հարցի շուրջը» իր գրքովում, այնուհետև կրկնել իր մի այլ աշխատության մեջ («Հայ փիլիսոփայության պատմություն»), որի 65—83 էջերը դարձյալ կրկնված են այդ առաջաբանում (էջ 10—28)։

ներկայացվում և հերքվում է Եղնիկի կողմից» (Առաջաբան, 16. 19 ն.): Վ. Չալոյանը չի սխալվում արդյոք՝ նույնացնելով հոգու պլատոնյան և քրիստոնեական հասկացությունները: Մյուս կողմից՝ նա միայն ենթադրում է («Թեև Եղնիկը չի ասում, թե ում դեմ են գրված այդ բառերը, այնուհանդերձ հիմքեր կան կարծելու...», 16. 20), թե Եղնիկի քննադատությունն ուղղված է Պլատոնի դեմ: Կարողում ենք Եղնիկի երկի համապատասխան տեղը և տեսնում, որ խոսքն ուղղված է ընդհանրապես բաղմաստվածության և համաստվածության և ոչ թե հոգու քրիստոնեական հասկացության դեմ, ինչպես այդ երևում է նաև Եղնիկի երկի Մարիեսի կառուցվածքային հատկագծից (Գիտական հրատարակություն, էջ X I. 2):

Իբրև հետևություն իր այս ոչ ճիշտ մեկնակետի, Վ. Չալոյանը առաջաբանի նույն տեղում, շարունակության մեջ գրում է, թե «քրիստոնեության չատագրով Եղնիկը յուրովի է ընկալել քրիստոնեությունը, ունեցել է քրիստոնեական կրոնի գաղափարախոսության իր հասկացությունը» (16. 9): Փաստերից ելնելով՝ մենք դժվարանում ենք հաշտվել Եղնիկին իր ժամանակի եկեղեցու վարդապետությանը հակադրող այս մտքի հետ: Եղնիկը պլատոնականների մասին գրել է.

Իսկ պղատոնեանին՝ աստուած և հիւղ և իղոս, որ առաջին՝ նիւթ է, և երկրորդն՝ առանձինն ինչ ուրով (Մ § 295. 1, Բ 204. 7 ն., Գդ), որ թարգմանված է «Платоники же <признают> богом вещество и идею, из которых первое <понятие> есть материя, второе—нечто отдельное» (127. 4): Մեզ այստեղ հատկապես հետաքրքրում է նախադասության առաջին մասը. ուստի են այն ճիշտ չի թարգմանված. դուրս է եկել, որ պլատոնականներն իբր աստված են համարում («признают») հյուղը (իբր «вещество») և իղոսը. առնինչ՝ բնագրի իմաստն է. «Իսկ պլատոնականները [ենթադրում են, թե գոյություն ունեն, ընդունում են]՝ աստված, հյուղ և իղոս»: Եղնիկի այս մտքի կրկնությունն է նրա հետևյալ նախադասությունը, որ ապացուցում է մեր ասածը. «Իսկ Պլատոն, որ Աստուած և հիւղ և իղոս դնէ էությամբ...» (Մ 328. 1, Բ 224. 10, Գժբ), որ ուստի են ճիշտ է թարգմանված, եթե չհաշվենք բայի սխալ թարգմանությունը. «А Платон бога, материю и идею разбирает по существу...» (135. 7 ն.):

Ավելորդ ենք համարում մեջ բերված նախադասության մեջ պլատոնյան իղոս-ի եղնիկյան մեկնաբանության՝ «առանձինն ինչ ուրուք» ուստի են սխալ թարգմանության վրա՝ «нечто отдельное» (127), կանգ առնել. Մարիեսը ուղղված փոխփոխական արտահայտության ամեն մի բառը քննարկել է իր «Noms et verbes d'existence» (1928 թ.) աշխատության 70—76 էջերում և թարգմանել է լատիներեն՝ «specificum esse cuiusquam animati», ֆրանսերեն՝ «l'être spécifique d'un chacun» (ն. տ., էջ 105, 115) — «ամեն մեկի յուրահատուկ լինելությունը»:

Վ. Չալոյանը փորձել է Եղնիկին հակադրել եկեղեցուն նաև աստվածային նախախնամության հարցում:

Առաջաբանի եղրակացության առաջին կետում Վ. Չալոյանը գրել է. «Եղնիկի ժամանակ տիեզերական եկեղեցու տիրապետող աստվածաբանությունը մարդու գործունեության նկատմամբ պաշտպանում էր աստվածային նախասահմանվածության սկզբունքը, մինչդեռ Եղնիկն այն մերժում էր և նշավակում» (27. 1. րնդգծումը մերն է — Մ. Մ.): Եվ ի հաստատումն իր այս մտքի, որի

ճշտության դեպքում հայոց եկեղեցին կնդուլեր Եզնիկին, Վ. Չալոյանը մոտավոր թարգմանությամբ վկայակոչել է Եզնիկի հետևյալ նախադասությունը. «Ո՞ր հրաման տկար և անգոր սահման, զոր և զողֆն և ավագակֆն կարեն խախտել, յորժամ ի վերայ հասեալ՝ զոմն յրնչից և յարեւէ արկանիցեն» (Մ § 229. 1, Բ 161—162, ԲԺԵ)։ Սակայն հիշյալ միտքը արտահայտելուց առաջ պետք էր շրջահայացորեն ուսումնասիրել այն էջը, որտեղից վերցված է այդ ոչ իրական վկայությունը, ինչպես նաև նախորդ և հաջորդ էջերը և պարզել, թե Եզնիկը ո՞ւմ է ծաղրում։ Կարողում ենք այդ էջերը և տեսնում, որ հեղինակի հեղինակն է ու պայքարը ոչ թե ընդհանրական եկեղեցու, այլ պարզապես սնահավատ աստղագետ ֆալղեացիների դեմ է, որոնք պնդում էին, թե «զոր ինչ ճակատագրին դրեալ է հրամանացն, այնմ չէ հնար վրիպել» (Մ § 228. 1, Բ 161. 14. ԲԺԵ)։ Իսկ քաղեցիները տիեզերական եկեղեցի չեն, Եզնիկն էլ չի «մերժում և նշավակում» այդ եկեղեցու նախասահմանության սկզբունքը։

Քրիստոնեական վարդապետության առանձին հարցերից անցնելով ընդհանրացման, Վ. Չալոյանը հայտարարում է, թե Եզնիկը Հայաստանում քրիստոնեությունը պաշտպանել է այնպիսի հասկացությամբ, որն ինչ-որ չափով տարբերվել է արևմտյան եկեղեցու հայրերի կամ տեսաբանների դիրքից։ Սակայն ոչ միայն այդ. «Ավելին. Եզնիկը, ինչպես ցույց է տալիս մեր շարադրանքը,— գրել է Վ. Չալոյանը,— որոշ չափով ընդհանրապես դուրս է եկել քրիստոնեական աշխարհի գաղափարների սահմաններից» (27. 17)։ Վ. Չալոյանն անտեղի է եղնիկին հակադրում իր ժամանակի հայոց և արևմտյան եկեղեցուն։ Ընդհակառակն, Եզնիկը հայ եկեղեցու և ընդհանրապես եկեղեցու ականավոր և կրքոտ պաշտպաններից է. այդ երևում է նրա երկից և թարգմանական գործունեությունից։ Մյուս կողմից՝ հայ եկեղեցու պատմությունը վկայում է, որ Եզնիկի ժամանակ հայոց և արևմտյան եկեղեցին ունեցել են միասնական վարդապետություն, զոնե Վ. Չալոյանի մատնանշած՝ հոգու, նախախնամության և կամրի աղատության հարցերում, որոնցում Եզնիկն իբր հակադրվել է ընդհանրապես եկեղեցուն։

Նման «ապացույցներով» Եզնիկին եկեղեցու հակառակորդ դուրս բերելուց հետո Վ. Չալոյանը «Հինգերորդ դարի հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացու ուսմունքի հարցի շուրջը» իր աշխատության մեջ հարց էր դրել. «Եզնիկը հերետիկոս ևղե՞լ է թե ոչ» (էջ 61)։ Եվ Եզնիկի երկում հերետիկոսության այլ «մոմենտներ» («моменты») ևս հայտնաբերելով, նա գրել է. «Հայ իրականության այս առաջավոր անձը գտնվել է այն դարաշրջանի այս կամ այն քրիստոնեական հերձվածի բանակում» (էջ 62)։ Այս կարդալով՝ Մանուկ Աբեղյանը իրավամբ բացականչել է. «Ուրեմն Եզնիկը հերետիկոս» (Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 147, ծան. 2)։

Հերետիկոսությունը քրիստոնեական ուղղափառ եկեղեցու վարդապետությանը հակադրվող և, հետևաբար, եկեղեցու կողմից դատապարտված ուսմունք է. այդ ուսմունքի հետևորդն էլ հերետիկոս է։

Հավանաբար Մ. Աբեղյանի քննադատությունից որոշ չափով սթափված, Վ. Չալոյանն իր թարգմանության առաջաբանում չի համարձակվել Եզնիկին ուղղակի հայտարարել հերետիկոս։ Սակայն նա այդ մտքից բոլորովին ձերբազատված չէ, բանի որ առաջաբանում (էջ 26) պնդում է, թե կամրի աղատության հարցում Եզնիկը կողմնակից է Պելագիոսին, որին Եփեսոսի տիեզերական ժողովը (431 թ.) բանադրել է իբրև հերետիկոսի. ձերբազատված չէ, բանի որ

Եղնիկի հերետիկոսության մասին վկայող, 1940 թ. իր նշած «մոմենտները» նա բառացի կրկնում է թարգմանության առաջաբանում: Դրանցից է հետևյալը՝ որ առաջին անգամ նշվել է 1940 թ. աշխատության մեջ (էջ 61—62) և կրկնված է առաջաբանում (էջ 26—27): Եղնիկին դարձյալ յուրովի մեկնաբանելով, Վ. Չալոյանը նրան դուրս է բերել իբրև պայքարի կոչ անող՝ թե՛ ազգային թշնամիների և թե՛ մարդկանց կյանքում բոլոր տեսակի «անհարթությունների» դեմ. նրա «գրքում հնչում է ոչ թե քրիստոնեական, ստրկական ենթարկում բախտին, այլ պայքարի կոչ» և այլն (Առաջաբան, 27. 22): Եվ նա վկայակոչում է Եղնիկի այն տողերը, իր թարգմանական ուրույն «արվեստով», որոնցով Եղնիկը քննադատում է դարձյալ ճակատագրին հավատացող սնահավատ ֆավելացիներին. «Եվ կամ յուրժամ հէն յաշխարհ արշաւիցէ՝ տեռագերժ սոնել և կոտորել զմարդիկ, մի գաւրս ժողովեցեն, և մի գունդս առ գունդս կազմեցցեն...» (Մ § 230. 1—5, Բ 162—163, ԲԺԵ). վկայությունը երկար է (Առաջաբան, 27. 25—36): Զարմանալին այն է, որ սրան նախորդող պարբերության մեջ հիշատակված ընդհանրապես թագավորների հասցեին ասված խոսքերը («չէ պարտ՝ ոչ թագաւորաց մահու հրաման տալ...») Վ. Չալոյանը դիտում է որպէս պայքարի կոչ՝ ուղղված... հայ ժողովրդին: Նա նույնիսկ վկայակոչված պարբերության թարգմանության մեջ առաջին դեմքով է թարգմանել կամ այս դեմքին վերագրել Եղնիկի երրորդ դեմքով դրած բայերը. ցուցանեն հոգնակին առանց վարանելու թարգմանել է «<мы> доказываем». «մի գաւրս ժողովեցցեն» («թող զորք չհավաքեն»), «մի գունդս առ գունդս կազմեցցեն» («թող զնդեր զնդերի հտեից չկազմեն») նա յուրովի է մեկնաբանել. «то разве не <должны> собирать войска, не <должны> образовывать полки...» (27. 15 ն.): Ուրեմբ. ցուցանեն բայի նշված թարգմանությունից պետք է ենթադրել «մենք», ինչ որ սխալ է:

Վ. Չալոյանն իր միտքը դարգացնելով գրել է. «Դա պայքար է ոչ միայն այն ժամանակաշրջանի եկեղեցու պաշտոնական դավանաբանության (դոգմատիկայի) դեմ, այլև միաժամանակ կոչ է հայրենիքի պաշտպանության՝ Արևելքի և Արևմուտքի նվաճողներից, զունդ զնդի հտեից հավաքագրելու մարտակոչ՝ հայրենիքից դուրս վտարելու համար հայոց երկրի թշնամիներին» (Առաջաբան, էջ 27—28):

Մեզ համար կասկածից վեր պետք է լինի, որ Եղնիկը քրիստոնեական եկեղեցու ականավոր տեսաբաններից է. իսկ որպէս փիլիսոփա «հետեող է իդեալիստական փիլիսոփայության, ինչպէս առհասարակ քրիստոնեական ուսմունքը» (Մ. Աբեղյան, Երկեր, Գ, էջ 156):

Վ. Չալոյանը առաջաբանում (ինչպէս և դեռևս 1940 թ.) թերագնահատել է Եղնիկի հակահառույթյան նպատակը:

Առաջաբանի էջ 19—20-ում նա մի քանի անգամ շեշտում է, թե Եղնիկի երկի ամենազրխավոր, կենտրոնական խնդիրը բարու և չարի հարցն է⁴. այս-

⁴ Մանուկ Աբեղյանը ժամանակին քննադատել է Վ. Չալոյանի այս միտքը. «Եղնիկի այս աշխատությունը... դրել է նա,— կարելի չէ համարել արդյունք միայն հեղինակի անհատական արդատությունների և ասել, ինչպէս իր աշխատությամբ լուրջ, միայն փիլիսոփայել է բարու և չարի առեղծվածի մասին» (Մ. Աբեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 148): Իր «Հայ փիլիսոփայության պատմության» մեջ (էջ 83, ծան. 2) Վ. Չալոյանը նրան պատասխանելով գտնում է, որ իր նախադասության («նա իր... մասին») ոճն է միայն անհաջող («Эта неудачная по стилю фраза...»), և մյուս կողմից՝ այդ նախադասությունը, խոստովանում է՝ ինքը՝

տեղից էլ՝ նրա ուսման թարգմանության ենթավերնագիրը՝ «Յաղագս բարու և շարի»։ Եզնիկի «Երկի նպատակը շարի ծագման պատճառների հետազոտումն է» (էջ 20. 16)։ Վ. Չալոյանը այս հարցում անվերապահորեն հետևել է ն. Ադոն-ցին։ Սակայն պետք է նշվեր նաև, որ այս հարցում կան այլ հեղինակավոր կարծիքներ ևս, որոնք հիմնավորված են։ Առանց մանրամասնության մեջ մտնելու ասենք, որ (Վենետիկի հրատարակությանը) էջ 187-ից հետո Եզնիկը խոսում է բաղմաստվածության, համաստվածության և Մարկիոնի աղանդի մասին, որոնք կապ չունեն բարու և շարի հարցի հետ։

Վ. Չալոյանն արտահայտել է նաև բանասիրական դիտողություններ Եզնիկի երկի ձևագրի և տպագրության մասին։

Պահպանված միակ ձեռագրի մասին նա գրել է. «Հիմք կա կարծելու, թե Եզնիկի երկը լրիվ ձևով չի հասել մեզ, քանի որ տեղ-տեղ այն ընդհատվում է, տեղ-տեղ բացահայտորեն բացակայում է ներքին հետևողականությունը և այլն» (Առաջաբան, 9. 11)։ Վ. Չալոյանը կրկնում է Հ. Աճառյանին, որը նույնիսկ ենթադրում էր, թե Եզնիկի ձեռագրից դուրս է ընկել մի ամբողջ «գիրք» (Ա. Բագրատունու բաժանմամբ)։ Սակայն այս կարծիքին չեն ուրիշ բանասերներ, որոնք մանրամասն ուսումնասիրել են Եզնիկի երկը։ Այսպես, օրինակ՝ Գ. Գալմբյարյանը Եզնիկի աշխատությունը Մեթոգիոս Ողիմպիացու «Վասն անձնիշխանության» գրվածքի հետ հանդիպակաց սյունակներում համեմատելուց հետո գրում է. «Համեմատությունս կցուցնե, թե Եզնիկա գործուն ձեռագիրն այնչափ աղաճված չէ, որչափ կկարծվեր առհասարակ և ինչպես մեր ուրիշ մատենագրաց ձեռագրաց վրա կերևա։ Քանի մը նախդիրներ, քանի մը բառեր ինկած են ձեռագրեն, որոնք կրնան նաև տպագրության միջոցին հառաջ եկած ըլլալ։ Ետևա՝ թաղության տեղ մը միայն կերևա, որ անշուշտ ընդօրինակողի մը կվերաբերի։ Սահասարակ բնագիրը գրեթե անարատ մնացած է, վասնզի նյութն այնպիսին է, որ սակավաթիվ ընթերցող, հետևաբար և ընդօրինակող ունեցած է» («Նորագույն աղբերք Եզնիկայ Կողբացույ Ընդդէմ աղանդոց մատենին», Վիեննա, 1919, էջ 86)։ Նույն կարծիքին է եղել նաև հայագետ Լուի Մարիեսը (De Deo, 1924, 145—157)։

Չնայած իր պնդումներին, Վ. Չալոյանը Եզնիկի երկից միայն մեկ տեղ է նշել, որտեղ նրա կարծիքով (ծանոթ. 22) բնագիրն իբր ընդհատվել է։ Ստուգումից պարզվեց, որ այդ մի տեղը չեն նկատել ո՛չ Հ. Աճառյանը և ո՛չ էլ Մարիեսը. ուստի դրանով Վ. Չալոյանի կարծիքն ավելի ուշագրավ բնույթ է ստանում։ Մեջ բերենք կասկածի տեղիք տված հատվածը, ցույց տանք կասկածի պատճառը (եթե ճիշտ ենք կռահել)։

Իբրև մեռանէր Ումիզդ (գիտ. հրատ. «ուշի Ու»-մզդի»), զսերմն իւր յաղբիւր մի առկ. և մաւտ ի վախճան յայն սերմանէ կոյս մի ծնանելոց է, և ի ճմանէ ուղի եղեալ՝ հաւկանէ զբազումս ի զաւրացն Արհմենի. և երկու ևս նոյնպիսիք նոյնգունակ եղեալք հաւկանեն զնորա զաւրսն և սպառեն։

... Քան աղբերն զսերմնն կենդանի տալի պահել՝ զինքն ընդէ՞ր ոչ զաւրեաց պահել կենդանի. այլ այնպիսոյ բարւոյ աստուծոյ ուղի՝ ի շաւէն ուղտուն սատակեցաւ (Մ § 194. 1—9. Բ 142. 10, ԲԺ)։ Ռուսերեն թարգմանություն, էջ 97. 6 ն.։

Վ. Չալոյանը, ըլստ հետո է Եզնիկի փիլիսոփայության մեկնաբանումը բնորոշելուց, ծածկալի է, ապա ուրեմն պարզ է, որ Եզնիկի «Երկի նպատակը շարի ծագման կամ առեղծվածի հետազոտումը» չէ։

Վ. Չալոյանը ենթադրում է, թե «այլ աշնպիսւոյ» բառերից առաջ բնագիրը՝ բաց ունի և ըստ այնմ թարգմանությունն սկսել է նոր տողից: Իր աչքի առաջ ունեցած տպագրության համաձայն, նա ճիշտ է հասկացել, որ Որմիզդն է մեռնում՝ «...будто Ормизд перед смертью...» (97. 6 ն.): Սակայն ձեռագրի ընթերցվածը «Որմիզդի» է, սեռական հոլով, որ առաջին հրատարակիչները դարձրել են «Որմիզդ», ուղղական: Ինչպես տեղեկանում ենք Մարիեսի և Մերսիեի ծան. 469-ից, հայագետ է. Դյուլորիեն նկատել է տվել, որ մեջ բերված հատվածում խոսքը վերաբերում է ոչ թե Որմիզդի, այլ նրա որդու մահվանը, քանի որ ինչպես այդ հատվածում, այնպես էլ շարունակության մեջ Եղնիկը խոսում է «աշնպիսի բարի աստուծո որդու» մահվան մասին՝ «...աշնպիսույ բարույ աստուծոյ որդի՝ ի շաբէն որդույն սատակեցաւ»։ «բայց եթե արդարեւ, որպէս ասենն, քե որդին մեռաւ...» (Մ § 195. 4, Բ 143. 11, ԲԺ): Մարիեսն ու Մերսիեն բնդունելով Դյուլորիեի դիտողությունը (այն ընդունել է նաև Շմիդն իր գեղմաներեն թարգմանության մեջ, էջ 112, ծան. 91), նկատի առնելով ձեռագրի «Որմիզդի» ընթերցվածը և Եղնիկի գրածները որդու մահվան մասին՝ դիտական հրատարակության մեջ առաջարկել են «որ<դի Որ>միզդի» ուղղումը՝ «Որմիզդի որդին», որ մենք ճիշտ ենք համարում:

Վ. Չալոյանը հավանաբար տեղյակ չի եղել այս սրբագրությանը: Վերևում մեջ բերված ամբողջ հատվածի ողուներեն թարգմանությունը բնագրի հետ համեմատելուց պարզվեց, որ նա այս անգամ էլ ճիշտ չի թարգմանել Եղնիկի մտքերը, և դրանից է ծագել նրա անտեղի կասկածը:

ա) Եւ սաւտ ի վախճան արտահայտությունը, «որ նշանակում է (աշխարհի) վերջի մոտ ժամանակներում», թարգմանվել է «в момент кончины <Ормизда>» (97. 5 ն.): Ի միջի այլոց, նրա սխալը գալիս է Գ. Խաչատուրյանից, որ այդ հատվածը թարգմանել է «վախճանելուն մոտ» (70. 9):

բ)... հաւկանեն գնորա զաւրսն և սպառեն, աշխնքն՝ «խփում են նրա (Որմիզդի որդու) դորբերին և ոչնչացնում», թարգմանվել է «<снова> разобьют воинов Ар'мна» (97. 1 ն.). փակագծերում առնված բառն անտեղի է ավելացված և հետևանք է բնագրի սխալ ընկալման. ընդհակառակն, փակագծերի մեջ պետք է առնվեր «Ар'мна» սեռականը, քանի որ այն չկա բնագրում. սակայն դրա հավելումը նույնպես սխալ է, քանի որ բնագրում կարդում ենք նորա, որի տակ պետք է հասկանալ ոչ թե Արհմենին, այլ Որմիզդի որդուն. սա է իր դորբերով ոչնչացվել շար որդու կողմից՝ «... ի շաբէն որդույն սատակեցաւ»: Այստեղ Վ. Չալոյանը շեղվել է Գ. Խաչատուրյանի թարգմանությունից, որ ճիշտ է. «Երկու ևս անոռ նման նույն կերպով ծնվելով՝ պիտի դարենն անոռ գորբերը և սպառեն դանոնք» (70. 11—12. ընդգծումը մերն է.—Մ. Մ.): Կարծում ենք, որ «...և ի նմանէ որդի եղեալ՝ հաւկանէ գրագումս ի զաւրացն Արհմենի. և երկու ևս նոյնպիսիք նոյնգունսկ եղեալք հաւկանեն դնորա զաւրսն» նախադասության մեջ եթե Եղնիկը մեր ընդգծած դերանվան տակ դարձյալ Արհմենին. նկատի ունենար, գործածած կլիներ նույնության դերանվան սեռականը՝ «դնորին»:

գ) Հատկապես քան աղբերն զսերմեն կենդանի տայր պահել, զինքն ընդէ՞ր ոչ զաւրեաց պահել կենդանի նախադասության սխալ թարգմանությունից է ծագել, հավանաբար. Վ. Չալոյանի կասկածը բնագրի թերիության մասին. «...почему вместо того, чтобы <свое> семя предать источнику на сохранение, <он> сам не смог живьем сохранить его?» (98. 3—5): Թեև

այսպես կան այլ սխալներ ևս, սակայն ուշադրություն դարձնենք զինքն զերան-
վան թարգմանության վրա՝ «его»: Բավարարվում ենք մեջ բերելով Դ. Խաչա-
տուրյանի ճիշտ թարգմանությունը. «փոխանակ աղբյուրին կենդանի պահել
տալու սերմը, ինչու չկրցավ ինքզինք կենդանի պահել» (70. 16): Վ. Չալոյանի
կարծիքով, հենց այստեղ է բնագիրը պակաս: Բայց նա անուշադրության է
մատնել հաջորդ նախադասությունը և անցել նոր տողի: Հակառակ իր հետևած
տպագրության և Եղնիկի բոլոր հրատարակությունների, նոր տողից սկսելով՝
նա խղել է «այլ այնպիսով բարոյ աստուծոյ որդի՝ իր չարէն ողոյն սատա-
կեցաւ» նախադասության կապը նախորդի հետ: Նա պետք է նկատեր, որ հատ-
վածում իրար հետ կապի մեջ են Դան-ը («քան աղբերն...») և այլ-ը («այլ
այնպիսով...»):

Ի միջի այլոց, նշված նախադասությունից անմիջապես հետո, շարունակու-
թյան մեջ էլ Վ. Չալոյանը կատարել է թարգմանական նույն կարգի սխալ. որք
յանկածուքեանն յաղբեցին բարոյն և որդոյ նորա (Մ § 194. 10, Բ 142—143,
ԲԺ) թարգմանվել է «...которые своей подлостью превзошли добро <Ор-
мизда> и сына его» (98. 8—9): Բնագրի իմաստն է. «որոնք իրենց ընկա-
ծության (անկման) ժամանակ հաղթեցին բարուն և նրա որդուն»:

Այսպիսով տեսնում ենք, որ 22-րդ ծան. մեջ Վ. Չալոյանի հայտնած կաս-
կածը բնագրի ընդհատման մասին անհիմն է:

Առաջաբանի էջ 29-ում Եղնիկի՝ 1959 թ. ֆրանսերեն թարգմանությունը
վերագրվում է միայն Լուի Մարիեսին. պետք է ավելացնել նաև Շ. Մերսիեի
անունը, ինչպես կարդում ենք հրատարակության անվանաթերթի վրա՝ «...et
Ch. Mercier—և Շ. Մերսիե»:

Ինչպես հայտնի է, Եղնիկի երկը մեզ հասել է առանց խորագրի, և երեք
հիմնական հրատարակությունները կրում են «Գիրք ընդդիմութեանց» (Զմյուռ-
նիա), «Եղծ աղանդոց» (Վենետիկ), «De Deo» (Փարիզ, 1959) անունները: Իսկ
Ն. Ադոնցն առաջարկել է «Ծառք յանդիմանութեան»: Այս առթիվ Վ. Չալոյանը
առաջաբանում (էջ 29) գրում է. «Այս տարբեր առաջարկներում և առանց դրանց
որևէ ճիմնավորման արտահայտվում է Եղնիկի ստեղծագործության բովան-
դակության տարբեր հասկացությունը, զգացվում է սոցիալ-դասակարգային
ձգտումը Եղնիկի աշխատության գնահատման հարցում...»: Վ. Չալոյանը Եղ-
նիկի երկի համար առաջարկել է մի նոր անուն՝ «Գիրք հերքմանց. Յաղազս
քարոյ և շարի»: Ի միջի այլոց ասենք, որ ռուսերեն նրա թարգմանությունից
հստակ երևում է, որ գիրքորոշումը, նույնիսկ եթե այն ճիշտ լինի, գեռքավա-
կան չէ Եղնիկի երկի բովանդակությունը ճիշտ հասկանալու, առավել ևս ճիշտ
թարգմանելու համար, և այս երկին խորագիր տալը միանգամայն երկրորդա-
կան է հայ բանասիրության համար: Վ. Չալոյանն իր տված խորագիրը «հիմ-
նավորել է» մի քանի տողում. «... որովհետև այսպիսի խորագիրը համեմա-
տաբար ավելի լրիվ է արտահայտում գրքի բովանդակությունն ու էությունը և
զերծ է Եղնիկի ուսմունքը (—Մ. Մ., «учение») աստվածաբանության վերածե-
լու ձգտումից» (Առաջաբան, էջ 29): Նախորդ շարադրանքից արդեն մեզ ծանոթ
է նրա հակառակ ձգտումը, բայց նման դեպքերում ձգտումը այլ բան է, իրա-
կանությունը՝ այլ: Անշուշտ, Լ. Խաչերյանը Վ. Չալոյանին հետևելով է Եղ-
նիկի երկը համարել «աշխարհիկ բնույթի» («Բանբեր Մատենադարանի», 7,
1964, էջ 98):

Ինչպես հայտնի է, Եղնիկի երկրորդ հրատարակիչ Ա. Բագրատունին ամբողջ երկը բաժանեց առանձին վերնագրված չորս դրքի և ամեն մի գիրք՝ գլուխների: Ձեռագրում ոչ մի բաժանում չկա: Վ. Չալոյանն այս բաժանման մասին գրում է. «Դա համապատասխանում է Եղնիկի ստեղծագործության բովանդակությանը, բայց ոչ ամբողջովին...» (Առաջաբան, էջ 29. 10 ն.): Առանց վերապահության պետք է ասել, որ Ա. Բագրատունու բաժանումները սխալ են: Լ. Մարիեսը (չնայած կրոնա-դասակարգային իր պատկանելությանը) խորապես վերլուծելով Եղնիկի երկը, ցույց է տվել, որ այդ բաժանումները արմատապես հակասում են երկի բովանդակությանը, շատ բանասերների են խանգարել ճիշտ ըմբռնելու Եղնիկին (տե՛ս նրա «De Deo», էջ 17—33): Վ. Չալոյանը ևս ընդունել է չորս գիրք, 2-րդի և 3-րդի միջև խախտելով Ա. Բագրատունու բաժանումը, դրանց տվել է նոր վերնագրեր. խախտել է Ա. Բագրատունու գլխակարգությունը: Այսպիսով, նա կրկնել է քննադատված և քննադատելի սխալներ: Բացի այդ, արդեն ասացինք, որ նա այս բոլորով դժվարացրել է ուսերեն թարգմանության և բնագրի համեմատությունը, հղումների համար գրանցում ցանկացած տեղը դառնելու խնդիրը, ողջ բանասիրական աշխատանքը: Սրան ավելացնենք նաև այն, որ այլ է նաև Գ. Խաչատուրյանի հրատարակության գլխակարգությունը:

О РУССКОМ ПЕРЕВОДЕ «КНИГИ ОПРОВЕРЖЕНИЙ» ЕЗНИКА КОХБАЦИ

М. П. МИНАСЯН

(Резюме)

В статье путем сопоставления подлинника и русского перевода «Книги опровержений» известного армянского мыслителя V в. Езника Кохбаци показываются неточности русского перевода, что в значительной степени является результатом непонимания текста подлинника; показывается научная несостоятельность стремления автора предисловия и перевода В. К. Чалояна представить апологета христианства Езника Кохбаци в качестве еретика, якобы выступающего против церкви. Показывается также, что подобная интерпретация основана на предвзятом толковании учения Езника в целом, чем и обусловлены натяжки в ряде важных мест русского перевода «Книги опровержений».